



31. ՀԱԿՈՓԻ ՈՒ ՀՈՒՍԵՓԻ ԽԵՉԱՅԹԸ

Ժամանակով մե թաքավոր ա հըլնում ա: Էս թաքավորը բարի թաքավոր ա հըլնում: Էս թաքավորը սովորութուն ուներ չափաթը մե անքամ էթա որսի: Մե անքամ էլ եփ որսի գնաց, չոլի մեչտեղը քթավ մե նորհելուկ էրեխա՝ քրոչերի մեչ փաթթուկ: Բացին տեսան մե խորոտ, նխշուն տղա յա:

Թաքավորը վազիրին ասավ.—Վազի՛ր, էս տղեն բղի տանեմ ընձի, իմ տղեն ախպեր չունի, թո հըլնեն ախպեր:

Վազիրն ասավ.—Քո կամքն ա, թաքավոր՛, իմալ ուզում ես, արա՛, քո դեմը խոսողը որն ա:

Էրեխին վերցին բերին թաքավորի պալատը: Թաքավորի տղի անունը Հուսեփ էր, էս տղի անունն էլ դրին Հակոփ: Դե, ջիղում եք, էլի, խեչաթի էրեխեն շուշուտ ա ջոչընում: Էս Հակոփն էլ շուշուտ ջոչըցավ, հիրա ախպոր խետ էթում էր հուսումարանը: Թաքավորը էրկսին էլ շատ էր ուզում, հիրանից չէր ջոկում: Էրեխեքն հիրանր ձեռից բռնում ին, էթում ին հուսումարանը, հուսումարանից դուս գալուց ետո հիրանր ձեռից բռնում ին, գալում ին տունը:

Մե օր էլ հուսումարանի էրեխեքը խոսկը մեկ են անում, թնփում են Հուսեփի վրեն, որ տփեն: Հակոփ, դու Հակոփ, սկսում ա ըտոնցը տփել: Էնենց ա տփում, որ հըմմեն պարկում են ու նոնոում են: Վարժապետները գալում են, ինչ տեսան, մե աչակերտ սաղ չի մացե, հըմնի չիթ—բերանը Հակոփը արեր ա արնլվա, կողները ջնոթեր ա, պարկեր են, նոնոում են: Ուրբարը տանում են թաքավորին ու էրեխեքի խերերին: Հաֆկվում են ու թաքավորին բողոք են անում: Էստեղ Հակոփը հըմմեն մանդրամաս պատմում ա, մե խատ սութ չի ասում ա: Տենում են, որ թաքավորի տղերքը մեղավոր չեն, ամմեքը հիրա էրեխին քցում ա շլակը, էթում ա:

Էրեխեքը մե չափաթից ետո լավնում են, էլի գալում են հուսումարան: Նորից կոփ են քցում, որ էրկու ախպորն էլ տփեն: Քաղաքի խուժաններին էլ հիրանց խետ բերեր են: Նորից Հակոփը հըմմնին տփում ա, մեկի թեն ա խանում, մեկի անգաճն ա քոքա-

խան անում, մեկի ոտն ա կողքում ու ջանդակները փռում ա: էլի խաբարը տանում են թաքավորին, խերերին, գալում հաֆկվում են, դալմադալն հրնգնում ա:

Ժողովուրթը թաքավորին պահանջ ա դնում.— Յա բղի էտ էրե-
խին եռացնես, յա մենք կըթողենք կէթանք, յա թե չէ ապստամբու-
թուն կանենք, չեզի թախտից կըքցենք:

Թաքավորը, որ տենում ա՝ հնար չըկա, խոսկ ա տալում էրեխին մե յանով անա: Գալում են, նազիր-վազիրի խեստ մասլաթ են անում, որոշում են Հակոբին փող տան, մե ձի տան, քաղաքից եռացնեն:

Մեկէլ օրը թաքավորը Հուսեփին հուսումարան ա հղրկում, Հա-
կոբին թողում ա տունը: Հուսեփը որ էթում ա հուսումարան, Հա-
կոբը մնում ա մինակ, կանչում ա Հակոբին ու որոշումը հայդնում
ա:

Հակոբը նիյաթները կախում ա, հըմա ի՞նչ անա, թաքավորի
հրաման ա, խոսաց, գլխը կըթոցուն:

էս տղին մե ձի են տալում, մե խուրջին ոսկի ու քաղաքից եռաց-
նում են:

Հուսեփը հուսումարանից տուն ա գալում, ախպորը դես ա ման
գալում, դեն ա ման գալում, չի քթնում: Սկսում ա լւացը: Խերն ու
մերը ասում են, որ աքսորեր են:

Հուսեփը ի՞նչ կաներ, որ աներ: Ձենը կղրում ա, նստում ա: Թո
Հուսեփը մնա ըստե, մենք խաբարը տանք Հակոբից:

Հակոբը գնաց, գնաց, խասավ մե դաշտի, տեսավ էս դաշտի
մեչ օխտը ճամբա յա գալում, միանում: Էկավ էս օխտը ճամբի մեչը
նստավ, գնացող-էկող բազիրգյաններին թախնեց, տարավ լցեց մե
զաղի մեչ:

էսենց քաչեց օխտը տարի: Հակոբը ամմեն տեղ բազիրգյաննե-
րի մեչը ախ ու սարսափ էր քցե: էլ էս ճամբով գալող-էթող չըկար:
Ոտները կղրավ: էս վախտը Հակոբը 25 տարեկան էր, հըմա Հու-
սեփը մե տարի Հակոբից ջոչ էր, 26 տարեկան էր: Մեկ էլ Հակո-
բը տենում ա, որ հիրա ախպեր Հուսեփը էկավ: Հինքը Հուսեփին
ճանչնում ա, հըմա Հուսեփը Հակոբին չի ճանչնում:

Հակոբը մտածում ա, որ Հուսեփին մե լավ վախճնա:

Թուրը քաշում ա, գալում ա Հուսեփի ճամբեն կղրում ա, ասում
ա.— Ասա տենամ, դու քանի՞ գլխի տեր ես, որ էկեր ես իմ խողը,
դու իմ անունը չե՞ս լսացե, թե՞ ընձի մարթի տեղ չես դրե:

Ըստե Հուսեփի լեզին ջուր ա դառնում, ասում ա.— Ո՛վ քաջ,
ես քո անունը լսացեր եմ, մտեր եմ քո խողը, ինչ ուզում ես, արա՛,
հըմա ես չեզի վնաս տալու խըմար չեմ էկե, ես էլ մե ցավ ու դարդ
ունեմ, որ էկեր եմ:

—Դե ասա՛, տենամ՝ դու ո՞րն ես, հընչե՞ս էկե, հո՞ւր ես էթում, ի՞նչ ա քո դարդը, որ դուզը չես ասե, գլոխտ կըթոցում,—ասում ա Հակոփը:

Ըստե Հուսեփն ասում ա.—Ես ֆլան թաքավորի տղեն եմ, անունս Հուսեփ ա: էթում եմ Ջինումաչինի թաքավորի խողը: Ջինումաչինի թաքավորը մե փաճիկ ունի, անունը Փիրուզա յա, էթում եմ, որ էն փաճկան առնեմ:

—Բա դու չե՞ս հիմանում, որ ընդե էթացողը ետ չի գալում: Թաքավորի փաճիկը պայման ա դնում, պայմանը չեն կանում կատարեն, էթացողների գլոխը կղրում ա: Արի, քանի գլոխտ վրես ա, ե՛տ դառցի, զնա՛ քո երգիրը,—ասում ա Հակոփը:

Ըստե Հուսեփն ասում ա.—Ո՛վ ավազակապետ, ես իմ գլխից ձեռ եմ վեկալե, էլ չեմ ուզում, որ մե օր էլ ա աբրեմ, գլոխս կըկղրեն, թո կղրեն:

Հակոփն ասում ա.—Դուզը բղի ասես, թե հընչե՞ս գլխիցտ ձեռ վեկալե:

Հուսեփն ասում ա.—Ես մե փսպեր ունի, անունը Հակոփ էր: Մե քաջ տղա էր: Էրեխեքի խետ կոփվ արինք, ընձի տփին: Հակոփն էկավ, էրեխեքին տփեց: Մեկի գլոխը կողրվավ, մեկի՛ թևը, մեկի՛ ոտը, մե խոսկով, էտ էրեխեքին արինք խուրդը խայան: Իչխաններն հաֆկվան էկան խորս մոտ գանգատ: Ասին. «Յա մենք, յա էտ էրեխեն: Յա բղի էտ էրեխին էս երգրից աքսորես, յա մենք կըթողենք կէթանք, յա թե չէ չեզի թախտից կըքցենք»: Խերս վախեցավ, փսպորս երգրից խառիչ արավ: Հիմի, փսպե՛ր ջան, ըտուց հետո իմ աբրեղն ինչ նշանակութուն ունի: Ես՝ թաքավորի տղա, փսպերս՝ աքսորուկ, էլ ինչի՞ս ա պետք էտ տեսակ թաքավորութունը: Ես որոչեր եմ էթամ Ջինումաչին, համ էտ փաճկան առնեմ, համ էլ կարող ա փսպորս մասին մե խաբար ստանամ: էս ա, էլ բան չունեմ ասելու:

Էստեղ Հակոփը փաթըթվում ա Հուսեփին, ասում ա, որ հինքը Հակոփն ա, էս բազիրգյաններին հինքն ա գարի բերե:

—Վա՛յ, Հակո՛փ ջան, փսպե՛ր ջան, ես չեզի գիչերով ի ման գալում, ցերեկով քթա:

Ըստե էրկուսն էլ ձիանքից հիչնում են, ձիանքը թողում են արածալու, հիրանք էլ խաց են ուտում: Էրկու փսպեր մե շափաթ մնում են ըստե:

էս մե շափաթվա մեչ շատ բաների մասին խոսացին, ծանղրթեթև արին, գարկին, թափին ու որոչին, որ էրկսով հիրար խետ էթան Ջինումաչինի թաքավորի մոտ, փաճիկն ուզեն:

Հուսեփն խապորը խառցուց.— Բա որ մենք էթանք Չինուամ-
չին, էս մալ-դովլաթին, էս տավար-ոխճարին, էս նախիրներին ու
ձիանքի իլխիքին ո՞րը տիրութուն կանա, չանքի մենք գանք խաս-
նենք:

Հակոփն ասավ.— Տիրութուն արող պետք չի, ո՞րն ա գլխից ձեռ
վերցրե գա ըստե, իմ մալ ու դովլաթն էլ տանա: Արխայի՛ն մաց,
ձեռ տվող չի հըլնի:

Հելան ու գացին Չինուամչինի թաքավորի խողը, քաղաքի կրա-
ղը մե պառավի տուն կար, մացին էս պառավի տունը դոնախ:

Ոսկի շատ ունին, պառավին ոսկի տվին, գնաց ուտելիք բերեց
թագա յորդան-դոչակ բերեց, լավ ձերան-խման, ետո Հակոփը պա-
ռավին խառցուց Փիրուզայի մասին:

Պառավն ասավ.— Էս Փիրուզան քսան տարեկան ա: Որ հե-
լավ 16 տարեկան, ուզողներն էկան: Էս չորս տարի ա, գալում են,
էթում են, ախճիկը ոչ մեկի չի խավնում, գլխնները կղրել ա տա-
լում: Էնենց պայման ա դնում, որ տակից չին կանում դուս գան:
Դուք էլ, բալե՛ք ջան, տենում եմ լավ տղերք եք, մի՛ գացեք, ափսոս
եք, գլխներտ գարկել կըտա:

Հակոփն ասավ.— Նանե՛, ի՞նչ պայման ա դնում, որ չեն կանում
տակից դուս գա:

— Բալա՛ ջան, ես էլ չեմ հիմանում, ընդուց ետ գալող հլնում ա,
որ տենանք, թե ինչ պայման ա դնում:

Հակոփը մտածեց-մտածեց ու ախպորն ասավ.— Հուսեփ, հա-
ռեչուց չըզինք, որ էկեր ենք, ինչ ուզում ա հըլնի, բղի մեր ասածն
անենք, յա մեռնենք, հո խայտառակվուկ ետ չե՞նք փախնի:

Եփ լուսը բացվավ, էրկու ախպեր հելան գացին թաքավորի
պալատը: Որ խասան թաքավորի պալատը, գացին էլչու դաշին
նստան: Թաքավորը ակուշկից տեսավ, որ էրկու երիտասարթ տղա
էկան, էլչու դաշին նստան:

Վազրին ասավ.— Վազի՛ր, մա՛րթ հղրկա, թո էթա էն էրկու
երիտասարթներին կանչա, գան, տենանք ի՞նչ են ուզում:

Ղարավաչը գնաց կանչեց:

Տղերքը որ էկան, թաքավորին օխտ անքամ գլխ տվին, ձեռնե-
րը դրին դոչներին, կայնան թաքավորի հառեչը:

Թաքավորը խառցուց.— Ասե՛ք, տենամ՝ ի՞նչ տղերք եք, ի՞նչ եք
ուզում, ո՞ր խողից եք:

Հակոփն ասավ.— Թաքավո՛րն ապրած կենա, մենք էս ինչ
թաքավորի տղերքն եք, էկեր ենք քո ախճիկն ուզելու: Էսի իմ ջոչ
ախպերն ա, անունը Հուսեփ ա, քո ախճիկը՝ Փիրուզը բղի տաս
իմ ախպորը: Էտ վախտը Փիրուզը փարղի քամակից հիշկում էր:

Տղերքը հիրանը շատ դուր էկան: Հինքն հիրան ասավ. «Ինչ ուզում
ա հըլնի, ես էս տղերքին չեմ սպանի: Բոլ հելլավ իչքան արուն թա-
փի, ջնհել-ջիվան տղերք կոտորի»:

Թաքավորն ասավ.—Տղե՛րք ջան, ես իրավունքը տվեր եմ իմ
ախճկան, թե խավնավ, կըտամ, թե չըխավնավ, գոխներտ կըկղրեմ,
մեր պայմանն էտենց ա: Ափսոս տղերք եք, թողեք գացե՛ք, ձեր
երգիրը կառավարե՛ք, իմ ախճկանից ձեռ քաշեք:

Ըստոնք էրկուսով էլ կայնան, թե՛ չէ ու չէ, պայմանին համա-
ձայն ենք:

—Դե դուք եք հիմանում,—ասավ թաքավորը,—ձեր գոխը,
ձեր փորը, իմալ ուզում եք, էնենց արեք: Հիրկուն ախպերտ թո գա
ախճկաս մոտ, ախճիկա հարց կըտա, թո ախպերտ պատասխանա:
Հիրկուն Հուսեփը հելլավ գնաց թաքավորի պալատը:

Պալատի բաղի մեջը մե օթաղ կար, տղին տարան էս օթաղը,
ասին.—Ըստե կըսպասես, թաքավորի ախճիկը կըգա, կըխոսաք:
Սեղանը բացուկ ա, թե անթի ես, խաց կուտես, տեղը քցուկ ա, թե
նեղացուկ ես, հելի պարկի՛:

Հուսեփը սպասեց չանքի քչերվա ճեսը, տեսավ՝ ախճիկը չի գա-
լում: Ոսց ճերավ, հելլավ պարկավ: Քունը տարավ, քնավ, մնաց
քնուկ: Ախճիկը պահակ էր կայնացրե: Պահակները, որ տեսան Հու-
սեփը քնավ, Փիրուզին խաբար տվին: Փիրուզն էկավ, Հուսեփի ջե-
րը էրկու ճան քցեց ու գնաց: Հուսեփը գնալթնավ, տեսավ լուսը
բացվեր ա, հելլավ գնաց պառավի տունը: Հակոփը խառցուց, թե՞
ինչ խաբար կա, ի՞նչ ասավ:

Հուսեփը պատասխանեց.—Ախճիկը չեկավ, չըտեսա, խետը չը-
խոսացի:

Հակոփը զարմացավ, ասավ.—Ձի կարող պատահի, կարող ա
էկեր ա, դու քնուկ ես հելե, մե նչան թողուկ կըհըլնի, մե ջեբերտ
հըլկա՛:

Հուսեփը ձեռը ջեբը տարավ, էրկու ճան խանեց:

—Տեսա՞ր, չեգի էրեխի տեղ ա դրե,—ասավ Հակոփը,—բա չը-
կառցար մե քչեր գնալթուն մնաս, հիմի ի՞նչ անենք:

Նստան էլի ծանդը-թեթև արին, որոշին հիրկուն էլի էթան պա-
լատը, տեսան ախճիկն ինչ կասա:

Հըմա ախճկա սիրտն էլ ախ էր հընգե, վախենում էր, որ տղեր-
քը կըթողեն կէթան, անչը կըմնա ընդոնց վրեն: Սիրտը Հուսեփից
չէր կղրում:

Միյուս օրը էլի գացին պալատը: Տղին տարան ախճկա բաղի
մչի տունը: էս փեզնավանգն էլի քնավ: էս անքամ ախճիկը տեսավ,
որ քնուկ ա, ջեբը էրկու պոպոկ քցեց ու գնաց: Հուսեփը զարթ-

նավ, ձեռը տարավ ջերը, պոպոկները խանեց, Հելլավ ամոթ-զամոթ էկավ ախպոր մոտը: Հակոբին ինչ բղի ասեր, Հիրան Չոչ ախպերն էր: Որոշին, որ երորթ օրը Հակոբին էթա: Հակոփը Հիրկուն գնաց, խաց ճերավ, հրմա գնի չըխմավ, հինքն հիրան ասավ. «Կարող ա, որ գինու մեջը քնի դեղ են քցում, քնցնում են»: Գիչերվա ժամը էրկուն էր, ախճիկը էկավ, տղին զարթուն տեսավ: Նստան, խոսացին, հելան քնելու, Հակոփը խանեց, թուրը մեչտեղ դրեց:

Որ թուրը մեչտեղ դրեց, Փիրուզն ասավ.—Թե որ ընձի չիր խավնում, էս իրեք օր ա հընչիր գալում ու իմ քունն էլ խարամում, հընչե՞ս թուրը մեչտեղ դնում:

Հակոբին ասավ.—Դու իմ խառը, ես քո տեքրը: Չեզի տանում եմ իմ ախպոր խըմար: էրկու օր իմ ախպերն էր գալում, քնում:

Փիրուզը բան չասավ, էրկու ախպորն էլ սիրտը կպեր էր:

Հառավոտ շուտ Հակոփը գնաց պառվի տունը, Հուսեփին բերեց թողեց հիրան ուզածի մոտը, հինքը գնաց պառվի տունը: Միշուս օրը թաքավորին անչի լուս տարան, որ Փիրուզը համաձայնվեր ա տղի խետ: Թաքավորն էլ ուրխցավ, որ էլ իզուր արուն չի թափա: Ըստե թաքավոր օխտ օր, օխտը քչեր խառնիս արավ, ետո ախճկան լավ քոչով-բարխանով, ջհեզով ճամբու դրեց, գացին Հուսեփենց երգիրը:

Ըստոնք էկան Հակոփի երգիրը: Մալին, դովլաթին ոչ մեկը դայմիչ էր հելե: Ճամբեն գալու ժամանակ Հակոփը շատ էր պահակ կայնե, տեղ խասան թե չէ, պինդ քնավ: Որ Հակոփը քնավ, Հուսեփը որոշեց հինքը պահակ կայնի: Կնգա վղի չամչրաղը վերցուց ձեռը, լուսը տարածեց չորս կողմը, թուրը քաչեց ու կայնավ: էտ հրոպեին էտ տեղով մե դուչ էր հընցնում, էկավ, թխով տվեց Հուսեփի հերեսին, չամչրաղը ձեռից քցեց, վերցուց ու գնաց: Չանքի Հուսեփի ուշկն էկավ տեղը, դուչը չամչրաղը տարավ: Հուսեփը մնաց կայնուկ: Մտածեց. «Հելա խախկ, լավ կըլնի թողեմ ու էթամ»: Գնաց, գնաց, խասավ մե ծովի կրաղ: Ըստե կայնուկ մտածում էր, մեկ էլ տեսավ, որ մե նավ ա գալում: Նավապետին խնթրեց հիրանը խետները տանեն: Նավապետը խեխճ էկավ ու վերցուց, տարավ ծովի էն կրաղը, հիչըցուց, հինքը գնաց: Հուսեփը էկավ, էկավ, խասավ էտ երգրի թաքավորի քաղաքը: Հենց էտ ժամանակ վագիրը քաղաքի կրաղը ման էր գալում: Հուսեփը մոտըցավ, բացատրեց, որ հինքը չըսիք տղա յա, մե գործ չըկա՞, որ անա: Վագիրը ըստըրան տարավ, դառցուց նախըչի: Թո Հուսեփը ըստե նախիրը պախա, մենք խաբարը տանք Փիրուզից ու Հակոփից: Փիրուզը զարթնավ, տեսավ մարթը չըկա: էլ չուզեց Հակոփին զարթնցնա: Հելավ տրորուկ կանանչի իզը բռնեց, գնաց խասավ

ծովի կրաղբ: Մտածեց. «Ուրեմն, մարթն մե փորցանքի յա հուսատ էկե, էս ծովով ա գնացե: Ըտե մե լոթկ կար: Լոթկչուն մե ոսկի տվեց, լոթկչին Փիրուզին տարավ, ծովն հընցցուց էն յանը: Ըստե Փիրուզը տղամարթի շոր առավ, խաքավ, գնաց թաքավորանխտ քաղաքը: Փիրուզը նստավ մե վաճառականի դուքնի հանեչ, չանքի մութը հընգավ:

Վաճառականը տեսավ, որ մե օտար տղա սաղ օրը նստուկ ա դռան հանեչը, խառցուց.—Ա՛յ տղա, ի՞նչ տղա ես, հընչե՞ս սաղ օրը ըստե նստե:

Փիրուզն ասավ.—Անտեր տղա եմ, ծանոթ չունեմ, նստեր եմ:

Վաճառականն ասավ.—Որ դու անտեր տղա յես, ես էլ տղա չունեմ, արի տանեմ ընձի տղա:

Փիրուզն հոժարվավ ու գացին:

Ըտուց ետո առըտուրը Փիրուզն էր կատարում: Շատ սիրուն տղա էր: Փիրուզին տենալու, խետը խոսալու, ծանոթանալու խըմար հըմմեն էտ վաճառականի դուքանն ին գալում, առըտուր անում: Փիրուզի խերը շատ ուրախ էր:

Քաղաքի վաճառականները տեսան, որ հիրանց առըտուրն հընգավ, հելան գացին, թաքավորին գանգատ արին, որ էսենց մե խորոտ տղա հիրանց առըտուրը խանգարում ա, հըմմեն էտ մե վաճառականից են առըտուր անում:

Թաքավորը, որ լսում ա վաճառականների բողոքը, որոշում ա էթա էս վաճառականի խանոթը, տղին տանա: Ախճկան ու կնգան վերցում ա խետը, նստում են ֆայտոնը, գալում են էս խանոթը:

Թաքավորը որ տենում ա Փիրուզին, մթկի մեչն ասում ա.—էր-նեկ քո տիրոջը: Ոսալալ ա չեզի, տղա՛, վաճառականները թո հա բողոք գան, դու քո առըտուրն արա՛:

Թաքավորի ախճիկը, որ տենում ա, սիրահարվում ա Փիրուզի վրեն:

Մորն ասում ա.—Ա՛յ մեր, կա-չըկա, էս ա իմ մարթը: Հայրի-կին ասա, թո վաճառականի խետ խոսա, ընձի նշանեք, քանի տղեն հուրիչ ախճիկ չի սիրե: Ընձի, որ էս տղին չըտաք, էլ հուրիչի չեմ առնի:

Թաքուհին հենց էս հրոպեին թաքավորին ա ասում, թաքավորն էլ վաճառականին ա ասում: Վաճառականը թաքավորին խոսկ ա տալում, որ հիրկուն տղի խետ կըխոսա:

Հիրկուն վաճառականը տղին ասում ա, որ թաքավորի ախճիկը բզի ուզեմ չեզի: Փիրուզը բան չի ասում, համաձայնվում ա: Միյուս օրը վաճառականը էթում ա ու թաքավորի ախճիկն ուզում ա: Թո ըստոնք նշանվեն, խառնսի պաղրաստուլթուն տենան, մենք խա-

բար տանք կորուկ-մոլորուկ Հուսեփից, տենանք՝ ի՞նչ բանի յա: Հուսեփը ամեն օր նախիրը տանում ա դաշտը արածացնում, հիրկուն բերում ա լցում վազրի բակը: Մե օր էլ նախիրը տարավ դաշտը: Ճեսօրին շոքը զոռեց: Նախիրը տարավ ջրի կրաղը: Ընդե մե խատ չինարի ծառ կար, հինքը պարկավ էտ չինարի ծառի խովը: Ծառի վրեն մե թռչունի բուն կար: Ձաքերը խաղում ին: Հուսեփը մեշկի վրեն պարկեր էր, ծառին էր հիշկում, մեկ էլ տեսավ՝ ձաքերը մե փայլուն բան բնից գլորին: Հընգավ դուզը Հուսեփի դոշին: Վերցուց տեսավ հիրանց չամչրաղը: Վերցուց դրեց ծոցը, օրը ցերեկով նախիրը քչեց քաղաքը: Չամչրաղը ծոցի մեջ լուս էր տալում: Վազրի ախճիկը տեսավ, տփեւ տվեց, ձեռից առավ:

Հուսեփը մնաց լալով, մխկտալով: Սաղ օրը գլոխն ա տփում: Թո Հուսեփն հիմի էլի նախրչի մնա, մենք դառնանք Փիրուզի յանը, պսակենք:

Ձեր հընցե մե ամիս, ինչ նշաններ ին, վաճառականը որոշեց քանի շուտ ա խառը բերա: Թաքավորի ախճիկ ա, կարող ա վազիր-վաքլի տղեն խելքից հանեն, փոշմնի: Որ խառնիսն սկսվավ, էտ ժամանակ վազրի ախճիկը չամչրաղը քցեց վիզը, վազրի ձեռից բռնեց, զնաց խառնիս: Սառնսի ժամանակ Փիրուզը կայներ էր դռան մոտ, գալող-էթողին էր հիշկում: Ուշկն ու միթկը Հուսեփն էր: Մեկ էլ տեսավ, որ հեսա վազրի ախճիկը վազրի խետ էկավ, վզին հիրա չամչրաղը: Մտածեց. «Կարող ա, որ Հուսեփն ա բերե, ծախե ըստոնցը»: Եփ վազրի ախճիկն էկավ դռան մոտը, Փիրուզը ձեռը քցեց, չամչրաղը բռնեց: Վազրի ախճիկը նեղացավ:

Վազիրն ասավ. —Ախճի՛կ ջան, մի՛ նեղացի, թաքավորի փեսա յա, թո տենա, էլի կրտա, հո ձեռիցդ չառա՞վ:

Փիրուզը չամչրաղը վերցուց դրեց ծոցը, վազրի ախճկան ասավ, որ հիրա քեֆն անա, հիրկուն չամչրաղը ետ կըստանա: Փիրուզան մթկի մեշը շատ ուրխցավ. «Որ չամչրաղը ըստե յա, Հուսեփն էլ ըստե կըլնի»: Էտ մտքի խետ էր, մեկ էլ տեսավ Հուսեփը քոչոտ շորերը խաքուկ վախենալով էկավ: Փիրուզը որ տեսավ, սիրտը թռթփաց:

Ձեռը քցեց, Հուսեփի թեկից բռնեց ու ասավ. —Հէսօր իմ դոնախն ես, կըմնաս, քեֆ կանես:

Հուսեփն ասավ. —Ես նախրչի մարթ եմ, գոխտուկ եմ էկե, ո՞նց կըմնամ, վազիրը կաշիս տիկ կըխանա, մեշու խա՛ց, տվեք ուտեմ, էթամ:

Փիրուզն ասում ա. —Վազիրը չեզի չի կանա մե բան էլ ա ասա, նստի՛ իմ օթաղը, քո չե՛ֆն արա:

Հիրկուն խառնիւրդ վերջանում ա, ժողովուրթն էթում ա, Փիրու-
զը գալում ա Հուսեփի մտոր:

Նստում են իրեքով՝ Փիրուզը, Հուսեփն ու Թաքավորի ախճիկը:
Փիրուզը Հուսեփին ասում ա.— Դու իմ ղոնախն ես, իմ անչկի
լուսն ես, արի պատմա՛ք քո գլխի էկածը: Ես տենում եմ, որ դու
նախըջի չես, չեզի մե բան պատահեր ա: Թե դուզն ասես, կօքնեմ,
թե սութ ասես, գլուխտ կդրել եմ տալու:

Հուսեփի սիրտը վառվեր էր: Ինչ էկեր էր գլուխը, հըմմեն մեկ-մեկ
ասավ, վերջը խնթրեց, որ վազրի ախճկա ձեռից առնին չամչրաղը ու
հիրանը իրավունք տան, թողա, էթա:

էտ ժամանակ Փիրուզը բերեց չամչրաղը ու սովեց Հուսեփին,
խառցուց, թե՛ է՞ս ա, Հուսեփն ասավ՝ խա՛:

— Դե դու ըստե նստի, ես էթամ էն օթաղը, մե ախճիկ կա,
հղրկեմ գա, տենամ կըճանչնա՞ս:

Թաքավորի ախճկան առավ, գնաց մեկել օթաղը, ասավ, որ
հինքը էտ տղի կնիկն ա, տղեն ինչ որ ասավ, դուզն ա: Շորերը խա-
նեց, խաքավ հիրա չորերը, Թաքավորի ախճկա ձեռից բռնեց, էկավ
էտ օթաղը: Հուսեփը տեսավ, թե չէ, հելավ փաթթվավ ոտները:

Փիրուզն ասավ.— Տնաչեն, նորվա տղեն ես ի, ո՞նց չըճանչցար:
Ետ դառնալով Թաքավորի ախճկա յանը, Փիրուզն ասավ.— Թա-
քավորի՛ ախճիկ, էսիկ իմ մարթն ա, ըստու պստի ախպերը հավելի
քաջ ու սիրուն ա, չեզի կըտանեմ իմ տեքորը կըտամ:

Ախճիկը համաձայնվավ, Թաքավորին խաբար տարան, նորից
մե խառնիս սկսին:

Վազրի ախճկա բերանը մացեր էր բաց: Ի՞նչ աներ: Ըստուց իրե-
քով ձի են խեճնում, գալում են դուզը հիրանց ախպոր՝ Հակոփի յանը:

Հիմի մենք խաբար տանք Հակոփից: Հակոփը գիչերվա ճեսին
գարթնավ, տեսավ՝ ո՞նչ ախպեր կա, ո՞նչ էլ ախպոր կնիկ: Շատ
հընգավ դես-դեն, շատ ման էկավ, հըմա չըքթավ ո՞նչ ախպորը,
ո՞նչ ախպոր կնգան: Նորից գնաց Ձինումաչին, տեսավ՝ չըկան,
էկավ գնաց հիրա խոր երգիրը, տեսավ՝ չըկա: Բերեց հիրա մալ-
դովլաթը ծախեց, արավ նաղդ փող, օխտը ճամփի մեջտեղ մե խեյ-
րաթխանա բացեց: էթող-գալողը գա, առանց փողի իջքան ուզում
ա ուտա, խմա, էթա, մինակ մե պայմանով. իջքան բաժակը վերցա,
խմա Հուսեփի ու Փիրուզի կենածը: էս իրեքով գալում են, խասնում
են էս խեյրաթխանեն: Ուաց են դնում, գինի են բերում, ասում են, որ
բզի խմեք Հուսեփի ու Փիրուզի կենածը:

Ըստոնք բաժակները վերցում են, թե.— Մենք Հուսեփի ու Փի-

րուզի կենածը չենք խմում, մենք կըխմենք Հակոբի ու Սինամի կենածը (Սինամ թաքավորի ախճկա անունն էր⁹):

Էս խելրաթխանի ծառայողներն սկսին նեղանալ ու գացին Հակոբին գանգատ արին, որ էսենց իրեք մարթ են էկե, Փիրուզի ու Հուսեփի կենածը չըխման, խման Հակոբի ու Սինամի կենածը, մե խորոտ ախճիկ էլ Հակոբի ու Սինամի կողմից շնորակալութուն հայդնեց: Հակոբը մտածմունքի մեջ հընգավ, ետո հելավ էկավ էտ օթաղը: Տեսավ հիրա ախպերն ու ախպոր կնիկը, խետներն էլ մե խորոտ ախճիկ, որ արեի նման վառվում ա: Ըստե փաթըթվան հիրար, ուրախութունից լացան, ետո էլի ուրխցան ու պատմին հիրանց գլխի էկածը: Հակոբը Սինամին շատ խավնավ, պսակվան ու էկան հիրանց խոր քաղաքը: Թաքավորը տղերքին ու խառաներին տենալով շատ ուրխցավ և առաջարկեց, որ Հակոբը թաքավոր դառնա:

Հուսեփն էլ շատ խնթրեց Հակոբին, հըմա Հակոբն ասավ. — Ձուչ ախպերը դու ես, օրենքով դու բղի դառնաս թաքավոր:

Սխտ օր, օխտը քչեր Հուսեփին խառնիս արին, օխտ օր, օխտը քչեր Հակոբին խառնիս արին, օխտ օր, օխտը քչեր թաքավոր դառնալու չեֆ արին: Ընդոնք խասան հիրանց մուրազին, մենք էլ խասնենք մեր մուրազին:

